# ՆԵԼՍՈՆ, ՈՐԴԻ ՍԻՄՈՆԻ

*Եվ իրիկունները, հատկապես իրիկունները, երբ մթնժորում ու Արեգը ներս է քաշվում, երբ խրամատում խոհերին տրված ազատամարտիկը կկվի կանչին համահավասար մտքերն է ծալում-բացում, ապա մարտական ընկերոջ մահվան խուլությունն ու նրա հարազատ բացակայությունը Նելսոնի համար վատ երազի չթոթափվող-ծանր բախտագուշանքն է ունենում շարունակվող այս պատերազմում:*

Հայրն ու մայրը Բաքվում են ապրել, աշխատել, իսկ ինքը Սիսիանակերտում է ծնվել: Աժդահակ-բարուրաշ Սիմոն հայրը դեռ են գլխից էր «մի տեսակ» հարեւաններից հետ... Աղդամի կողմերից մի ադրբեջանցի փախչեան էր հայտնվել Խրամորթ գյուղում. իր վրա եկող ավտոմեքենան էր ճանաչելիս, ծանրաձողերը փնչոցով ու ընկերներով այս ու այն կողմ շպրտում, ձմեռվա իջնում ձեռքի տակ եղածով... Վերջում գլխին հավաքված ժողովրդին թուրքավարի-հպարտ հարցրել՝ ձեր մեջ կա՞ մեկը, որ իմ արածը կրկնի, հայե՞ր... Սիմոն-հայն արհամարհական ժպիտը շրթունքներին առաջ եկավ ու այդ փախչեանի աչքին՝ փթանոց ծանրաձողերը խաղայրեն մեկանուր իր մարմնից վեր պահած... Հետո օրերով ձեռքը չէր իջել ու դրած էր ման գալիս՝ ճոզվածքը էր դարձել, բայց արածից գոհ ու հպարտ էր՝ ադրբեջանցու յեզուն կարճացրի. թե չէ թուրքական մեր գյուղին խայտառակ էր անելու... Պարմական գրքեր շատ էր կարդացել. պատմության ոլորաններում մերն ու իրանցն ուսումնասիրել էր եւ հակակրանքով հետ փախավ Բաքվից... «Շատ են խանձ-ջիգյար» անում ու կեղծավոր ժպտում, չեմ սիրում մարդկության եղ տեսակը»,- ասաց:

Սիսիանակերտի նոր կառուցվող Արմենավան թաղամասում հողատարածք ստացավ, իր ձեռքերով երկհարկանի գեղեցիկ տուն կառուցեց, այգի հիմնեց: Որսի լավ սիրահար է: Ժամերով կնստի ու կպատմի, իսկ թե որ խոսակիցն արդեն ծանրացած



սրտանցից, դանդաղ ու արժանապատիվ կպարծենա եւ որսի մշակված-խնամված ձեռքին կրեքի ու նրա ուսերին կզգի՝ էս էլ ինձնից քեզ հիշատակ, ժամանակ կունենաս, մի օր արի քեզ տանեմ մեր ծմակներում ման տամ: Չեռն բնկած հյուրին անպայման տուն է հրավիրում ու օջախին է ներկայացնում: Հետո իր ձեռքով արված նկարներին է ծանոթացնում:

Իրենց ապահովության համար Բաքվի քույրերը հերթով զանգել ու կարծել են, թե շարժման ղեկավարն իրենց կրտսեր քույրիկան է, ասել են՝ աղջի՛, խելոք մնա, ապա, քող մյուսներն էլ խելոք մնան, բա որ մեզ էլ կոտորե՞ն: Վալյան հարցի լուծման ծզծզումից ջղայնացած է եղել, նաեւ քույրերի ազգային-անհասկացողությունից, նաեւ... Շատ բան է ուզեցել ասել հեռախոսով, բայց կարճ է կապել, ասել է՝ էդ որ ջուր ամեն օր երշիկ եք ուտում, մենք՝ չէ, լա՞վ է: Հիմա էնքան ենք կանգնելու, որ մենք էլ ուտենք:

Շուշիից Սիսիանակերտի ռմբակոծության ժամանակ, Բաքվի քույրերը, որ հիմա հայաստանցի են, իրենց ապահով լինելուց չեն զարմացել, զանգել, հորդորել են՝ հիմա լա՞վ է, էդ երշիկը ոչ դուր կերար, ոչ էլ մենք, գոնե աղջիկներին վերցրու-արի մեզ մոտ, մինչեւ էդ ռմբակոծությունները կվերջանան: Բայց Վալյան իզուր չէր ժամանակին Բաքվի օդից կտրվել ու Սիսիանակերտ տեղափոխվել, այս անգամ էլ հպարտ ազատամարտիկի հպարտ մոր նման էր խոսել, ասել էր՝ իմ մինուճար որդուն թողնեմ էն սար ու ձորերում ու գամ ձեր հետ ի՞նչ խոսեմ. զենքի բարձրացումից ու ձեր հարստության բողոքված բարձրաձայն ախ ու վի՞շի՞ց: Իմ Նելսոնին ես մենակ չեմ թողնելու:

Իսկ Նելսոնը Սիմոն հոր ու Վալյա մոր արժանավոր զարմը եղավ: Ազատամարտիկ Նելսոն Խաչատրյանը, որ Շարժումն սկսվելուն պես, Կապանի ավտոճանապարհային տեխնիկումի դասընթացները կիսատ թողեց ու Սիսիանակերտ վերադարձավ: Եվ ինքն արդեն զենքը ձեռքին մարտադաշտում մի գառ էր Հայրենիքին նվիրաբերված: Ու անցած նրա մարտական ուղին Լաչինն էր ու Մարտակերտը, Հորադիզն ու Աղդամը...

-Գեղամը, ամենամոտ ընկերս էր վիրավորվել,- ինքն է պատմում,- գնդակը շնչափողին էր կպել: Սկզբում չէր զգացել: Հետո ասաց՝ շունչս կտրվում է: Արդեն նվաղել-պառկել էր: Ասաց՝ տղե՛րք, աչքերս բաց են, բայց բան չեմ տեսնում: Անթարթ ինձ էր նայում, չգիտեմ տեսնո՞ւմ էր՝ չէր տեսնում, աչքերն արցունքոտվել էին: Արյունն արդեն տեսել էինք, վերջաշապիկն էինք հանում, երբ աշխարհը փուլ եկավ գլխներիս... Տանկի ուղիղ նշանառությամբ կրակոց էր... Մեր ուշաթափ-գիտակցության մարմինները արդեն ուրիշներն են կռվի դաշտից հանել-հիվանդանոց տեղափոխել: Հետո բուժումներ, ապաքինում... Այդպես էլ չլսեցի ընկերոջս վերջին խոսքը, թաղմանը չմասնակցեցի, չիմացա՝ ի՞նչ էր ուզում ասել...

Ու թուրքն արդեն գել ու գազան էր: Մրապատկերում ընկերոջ մեռնող հայացքն ու իր անզորությունը, եւ Աղդամում շրջապատման մեջ գտնվող, իրենց պարեպատ խփող թուրքերին գիշերով լավ թուրքերենով կանչում ու իրենց մոտ էր հրավիրում՝ Մամե՛դ, Էլդա՛ր, եկեք էստեղ... Եվ սառնասրտությամբ ու արհեստավարժ հենքով կրակահերթով ցնդին էր տապալում դեպի իրեն վազողներին...

-Թշնամու ընկնելու մեջ էլ տարօրինակ մի բան կար,- Նելսոնն է,- այնքան էլ լավ չէի տեսնում՝ մութ էր, բայց այսպիսի բան նկատեցի. նրանց մարմինները թուլացած-ծալծլվելով ներքեւ էին սահում, իսկ իրենք դեռ հուսով ու զարմացած մեզ էին նայում: Այդ պատկերները մնայուն են իմ մեջ. ընկերոջս ու թուրքի զարմացած հայացքները... Ինձնից չէ, ճակատագրից էին զարմացած դեռ պիտի որ ապրեին աշխարհիս վրա:

Բչախոս է: Ծույլ մի հանգստություն ունի ներսը պահած: Արտաքինից այարկոտ ու անտարբեր շարժ ու ձեւ ունի: Սակայն Նելսոնը՝ ընկերների պարծանքն ու սիրելին, կռվի դաշտում կրակի կտոր է ու ազատատենչ նրա կերպը պատրաստ է ուրատակ անելու նախահարձակ թուրք-ազերիների սրկամտությունը:

Աղդամի գրավման ժամանակ ոտքից վիրավորվել ու մի քանի օրով տուն էր ընկել: Լավ խնամված խաղողի «թարմերի» տակ նստած զրուցում էինք: Մեկ էլ հրամանատարն եկավ: Ողջագուրվեցին: Ծանր լուծ տարն եկավ: Ողջագուրվեցին: Ծանր լուծ բաշողի նման իրար լավ են հասկանում. Նելսոնը բեթի տակ ժպտաց, ասաց՝ պիտի գա՞մ... Հրամանատարն աչքը չէր կտրում նրա վիրակապված ոտքից, հարցից աշնրա վիրակապված ոտքից, հարցից աշխուժացավ՝ անհարմար վիճակից դուրս էր բերվել եւ հայացքում նշմարվող խնդրանքը բարձրաձայնեց. «Քիչ ենք մնացել, փոխարինող չկա՝ մարդ չի մնացել: Տղաները երրորդ հերթ են կանգնում: Թե ծանր չէ... Էս երկու օրը գնանք փոխարինենք»:

–Ծանր չէ՝ քայլել կարողանում եմ: Միայն թե արկի բեկորը մեջս է մնացել: Բժիշկը խոստացավ էս երկու օրը հանել: Հանի՛ գնանք: Գալու եմ, էս կիսատ չե՞մ թողնելու...

ՍԱՐՄԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Նկարում.- կենտրոնում Նելսոն Խաչատրյանը Աղդամի գրավումից առաջ